# ԲԱԶՄԱՎԷՊ

# ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

## ՀԱՆԴԷՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

### ԼԻՎԸԲՈՒԼԻ ԼԻՒԴԱԿԱՆ ՓԱՐՈՍԸ

Ամենայն ոք գիտէ որ Նաւահանգըստի մուտքին կամ ապառաժուտ ծովափան վրայ շինուած աշտարակը փարոս կը կոչուի, որոյ ծայրը բոլոր գիշեր լոյս կը վառի, ցուցընելու նաւորդաց նաւամատոյցը, մերձաւոր վտանգը, գտնուած տեղերնին և խարիսխ նետելու կէտը։ Ի՛ըսեն ոմանք թէ փարոս անունն յառաջ եկած ըլլայ յունական φαινειν բառէն՝ որ կը նշանակէ երևիլ, և այլք թէ փարոս անուն կրղղիէն՝ եգիպտական Ալէքսանդրիոյ մօտ, ուր Պտղոմէոս փիլատելփոս մեծաշէն աշտարակ մը կանգնել տուաւ 'ի գիշերային ապահովութիւն նաւորդաց. ուստ կից առին իրենց անունը բոլոր նոյն նպատակաւ շինուած աշտարակք։

Սկսեալ 'ի կանուխ ժամանակաց, գրեթէ նաւարկութեանց առաջին օրէն, սովորութիւն էր կրակ վառել ծովափանց վրայ՝ առաջնորդելու համար նաւորդաց. որ սկզբան պարզ փայտի խուրձերէ կը գոյանար, որոյ փոխանակեց ապա փայտածուխ ու հանքածուխ. և դեռ հազիւ դար մ'է որ սկսան առաջին անգամ տեսաբանական պատրաստութիւններ գործածել, և իւղոյն յաջորդեց քարաձիւթ, կաղ և մինչև ելեկտրական լոյս։

Հին ժամանակաց փարոսաց մէջ ամենէն վաղեմին ու հռչակաւորն՝ ինչպէս ըսինք վերագոյն, Պտղոմէոսի կանգնածն էր, որ իր գեղեցկաչէն յօրինուածութեամբն՝ եօթն հրաշալեաց կարգն անցաւ. որուն օրինակին հետեւեցան ամեն ծովափնեայ քաղաքք, ուզելով ապահովել իրենց նաւամատոյցը նոյնպիսի կարևոր շինութեամբք։ Ասոնց մէջ մանաւոր յիշատակութեան արժանի է Գաբրի կղզւոյն փարոսը, շինեալ նմանութեամբ ալէքսանդրեան փարոսին, որ գեղանշարժէ մը հիմն 'ի վեր տապալեցաւ, Տիբերիոս կայսեր մահուանէն քիչ օր առաջ։

Իսկ մեր ժամանակի փարոսաց մէջ բարձրութեամբ, եզական ճարտարապետութեամբ և հաստատութեամբ նշանաւոր է Ճենովայի փարոսը, որ



digitised by A.R.A.R.@

գեղեցիկ կերպով 'ի վեր ամբառնայ սպիտակ մարմարիոն քարէ ծովուն մակերևութէն 127 մեդրաչափ բարձրութեամբ։ Մտադրութեան արժանի է նոյնպէս Քորտովանի փարոսը, որ իր հոյակերպ ճարտարապետութեամբն անտարակոյս աշխարհիս երևելի փարոսաց կարգէն է։ Բայց որովհետև Եւրոպիոյ ամենէն աւելի ծովային երկիրը Անգղիան է, հետևաբար ամենէն աւելի փարոս ունեցողն ալ ինքն է. որոնք ամենքն ալ կրնան հրաշալիք անուանիլ գիտութեան և ձեռնարուեստից, և օր քան զօր միշտ աւելի դէպ 'ի կատարելութիւն դիմելու վրայ են։ Բրիտանական կղզեաց ափանց վրայ կը վառի գրեթէ ամեն գիշեր եօթն հարիւր բոց. և որպէս զի այս բազմաթիւ լուսաւոր կէտերն իրարու հետ չի շփոթին, մերթ կը գունաւորեն 'ի կարմիր, 'ի կանաչ և յերկնագոյն, և մերթ կը փոփոխեն գոյները. մերթ կը ցուցընեն կամ կ'աներևութացնեն լոյսերը, և մերթ կը յաւելուն և կը նուազեն պայծառութիւնները։ Եւ այս ամեն զանազանութիւններն ունենալու համար ալ, հարկ է որ տեսաբանական պատրաստութիւնքն բազմատեսակ ըլլան, զոր մի առ մի հօս ստորագրելն անօգուտ կը համարինք։

Այս փարոսաց մէջ ամենէն աւելի համբաւ ունեցողն Էտտիստընի (Eddystone) փարոսն է մերձ 'ի Բլիմըտհ։ Էտտիստընի քարաժայռին վրայ երբեմն երկու աշտարակք կը բարձրանային, որ աներևութանալով յանկարծակի, 1757ին ձեռն արկին շինել այժմեան փարոսը։ Ասոր շինութեան ատեն Գաղղիա Անգղիոյ հետ պատերազմի մէջ ըլլալով, օր մը գաղղիական նաւերն արշաւանք մ'ըրին նոյն կողմերը, և կալանաւորեցին բոլոր գործաւորները, զորոնք Լուդովիկոս ԺԵ թողուց ապա յազատութիւն։ 1759ին շէնքն բոլորովին աւարտեցաւ, և դար մ'է որ ամեն գիշեր Էտտիստընն իր լապտերը կը վառէ. կայսերութիւնք տապալեցան և ազինք շիջան, և իր բոցն կը տևէ անշիջանելի։

Ասկէց զատ ունի Անգղիա շատ մ'ուրիշ ճարտարագործ ու հոյաշէն փարոսներ, զորոնք զանց առնելով՝ կը ներկայացընենք աստ 'ի պատկերի բոլորովին եզական և նորաձև փարոս մը, զոր հնարեց Մ. Ա. Ֆրէյէր (Frajer), ճարտարամիտ անգղիացին։

Հիներն առակ մ'ունէին, նաև 'ի Ս. Գիրս աւանդեալ, որ երբ ձեռնարկութեան մը կատարման կամ տևականութեան անհնարութիւնը կ'ուզէին նշանակել, շինել 'ի վերայ աւազոյ կ'ըսէին։ Սոյն առակն հնարողք կրնային ըսել նոյնպէս շինել 'ի վերայ օդոյ, բայց և ոչ մտքերնէն անգամ կրցան անցընել կամ կարծել, որ յետագայք կրնան մտածել ու փորձել այդպիսի անհաստատ տարեր վրայ շէնք բարձրացնել։ Բայց ահա մեր օրերը կը տեսնանք գործածեալ զօդ ոչ միայն իբրև շարժիչ զօրութիւն, այլ և իբրև հիմն շինութեանց։

Լիվրբուլ անգղիական քաղաքաց մէջ ամենէն վաճառաշահը՝ ունի ընդարձակ նաւահանգիստ, որուն մուտքը գիշեր ատեն նշանակելու համար, հարկ էր ըլլար այնպիսի փարոս մը՝ որ տեսնուէր 'ի հեռուստ. բայց որովհետև ջրից ու տեղեաց անդիպութիւնքն ծանր ու մեծամեծ վտանգներ ընդ առաջ կը հանէին, անոր համար հնարեցին առաջիկայ նորաձև փարոսը։

Այս փարոսը կը ձևանայ աշտարակէ մը՝ գլանի վրայ հաստատուած, որ կը բարձրանայ քան զմակերևոյթ ծովուն 125 ոտնաչափ 'ի վեր, և 32 ոտնաչափ խորութեամբ կը յենու զանգակաձևի մը վրայ, 'ի ձուլեալ երկաթոյ, դատարկ և խոտորնաձև։ Զանգակաձևին մէջ պարունակեալ օդն 'ի լիւղ և 'ի վեր կը բռնէ զինքը, և խարսխեալ շղթայքն՝ որոց միջոցաւ 'ի յարաբերութեան է փարոսն ծովուն յատակին հետ, չեն թողուր որ շարժի և երերայ աստ անդ։ Եւ որովհետև Անգղիա շատ անգամ մառախլոյ մէջ կ'ընկղմի, անոր համար այս անպատեհութեան առջևն առնելու համար, աշտարակին վրայ բաց

digitised by A.R.A.R.@



ԼԻՎԼԲՐՈՒԼԻ ԼԻՈՂԱԿԱՆ ՓԱՐՈՍԸ

'ի լապտերէ զանգակ մ'ալ հաստատեցին, որուն պաշտօնն է առաջնորդել նաւաց, երբ մառախուղն մթագնէ փարոսին լոյսը։

Ուրեմն Լիվրբուլի փարոսն ուրիշ բան չէ, եթէ ոչ հսկայաձև լիւղական ջահ մը, որ կեցած է յատին, հաստատեալ տեսակ մը ներքնածովային նաւու վրայ, հիանալի թէ գիւտովն և թէ շինութեամբ։

digitised by A.R.A.R.@